ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

18.01.2019Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 11 անդամները:

Բացակայում են Ն.Վարդանյանը, Տ.Եփրեմյանը, Ա.Գասպարյանը և Ա.Փանոսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղարի Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը,Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Ս.Շահնազարյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 80 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 81 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակու վարձակալներին օտարելու համաձայնություն տալու մասին:
5. Չարենցավան համայնքի «Մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վճարները սահմանելու մասին;
6. Չարենցավան համայնքի սեփականության 2018 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
7. Չարենցավան համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
8. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
9. Չարենցավան համայնքի 2018 թվականի 4-րդ եռամսյակի /տարեկան/ բյուջեի կատարման մասին հաղորդում:
10. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1.Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 80 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով .***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 80 որոշման հավելվածի 5-րդ տողը շարադրել նոր խմբագրությամբ:

1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*
5		**Վարչական ղեկավար**	**Հայեցողական**		**5**	**240000**	**0**	**0**	**1200000**

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. **Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 81 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ և հաշվի առնելով Չարենցավան համայնքի Բջնի գյուղի վարչական ղեկավար Ա.Մաթևոսյանի 14.01.2019թ թիվ 91/04 և «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն Լ.Ազարյանի 15.01.2018թ թիվ 117/4 գրությունը և համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ Ա.Զաքարյանի զեկուցագիրը, ***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 81 որոշման 9-րդ հավելվածի 4-րդ կետի «9» թիվը փոխարինել «11» թվով.

4	**Խմբավար**	-	11	75500-78000	858.000

1. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 81 որոշման 4-րդ հավելվածի 6-րդ կետի «6» թիվը փոխարինել «5» թվով :

6	**Դաստիարակի օգնական**	-	5	75500-78000	390.000

2. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 81 որոշման 2-րդ հավելվածի 8-րդ կետի «11» թիվը փոխարինել «12» թվով:

8	**Դաստիարակի օգնական**	-	12	75500-78000	936.000

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշումը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի 1 ենթակետով,***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4.Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալներին օտարելու համաձայնություն տալու մասին:

/Զեկ. Վ.Չիլինգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 77-րդ հոդվածով, ***առաջարկում եմ*** տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալներին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացիների դիմումների.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Վահրամ Այվազյան	8-23-2	7 300 000	Սեփականություն	Անհատույց
2.	Սևիլ Ազարյան	3-1-59	1 400 000	Սեփականություն	Անհատույց

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5.Չարենցավան համայնքի «Չարենցավանի մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վճարները սահմանելու մասին:

/Զեկ. Վ. Չիլինգարյան/

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 23.11.2006թ. «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը հաստատելու մասին թիվ 1910-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 13-րդ և 19-րդ կետերի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 17 –րդ ենթակետով. ***առաջարկում եմ*** հաստատել «Չարենցավանի մշակույթ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների վճարների չափերը և համայնքի բյուջեի միջոցների հաշվին կատարվող թաղման ծախսերի առավելագույն չափերը:

ա) գերեզմանատեղի պատրաստում - 10000 դրամ
բ) գերեզմանոցի խնամք - 5000 դրամ
գ) աճյունի տեղափոխում - 10000 դրամ
դ) շինարարական և կենցաղային աղբահանում 1տն - 1000 դրամ
ե) գերեզմանոցի հարդարում, հողի հարթեցում 3*4 - 5000 դրամ
զ) գործիքների վարձակալություն 1 օր - 100 դրամ
է) դագաղի ձեռքբերում հիմնադրի որոշմամբ - 40000 դրամ
ը) հուշատախտակի պատրաստում - 5000 դրամ
թ) կառուցապատման աշխատանքներ 1 օր - 3000 դրամ
ժ) վճարովի հիմունքներով հատկացվող 1 քմ հողատարածքի արժեք- 2940 դրամ:
ի) սգո հանդիսությունների սրահի վարձակալություն 1 օրը-0 դրամ

<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Չարենցավան համայնքի սեփականության 2018 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի դրույթներով՝ ***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:.

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7.Զարենցավան համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյա

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի դրույթներով՝ հաշվի առնելով նախորդ տարվա գոյացած պարտքերը առաջարկում եմ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումարներ հատկացնել նախորդ տարվա պարտավորությունները մարելու նպատակով:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

8.Զարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով, որ Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատվել է 2018 թվականի դեկտեմբերի 14-ին և չի արտացոլվել 2019 թվականի տարեսկզբի պարտքերը և բյուջեի վարչական ու ֆոնդային մասերի ազատ մնացորդները,***առաջարկում եմ*** կատարել լրացումներ և փոփոխություններ 2019 թվականի հաստատված բյուջեում:

Լսեցին.

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

9.Չարենցավան համայնքի 2018 թվականի 4-րդ եռամսյակի /տարեկան/ բյուջեի կատարման մասին հաղորդում:

/Զեկ. Գ.Աֆյան/

Առաջարկում եմ ընդունել ի գիտություն Չարենցավան համայնքի 2018 թվականի 4-րդ եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդումը:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

10.Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղ. 28 շենքի 8 բնակարանի բնակիչ ***Արմեն Բոզինյանի*** 2019 թվականի հունվարի 14-ի թիվ 80-16 դիմումը ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել ***Արմեն Բոզինյանին:***

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Կողմ-11		դեմ-0		ձեռնպահ-0
Բաբայան Նարեկ		**Սահակյան Երեմ**		
Բաբայան Վալերի		**Վարդանյան Նորայր**		
Գասպարյան Մելիք		**Վարդանյան Սարգիս**		
Գրիգորյան Հակոբ		**Խլղաթյան Արսեն**		
Դավթյան Կարեն		**Պողոսյան Մնացական**		
Երիցյան Գագիկ				

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **Վ.ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ**